ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 26 >> Մարտի 2019թ. N 282-Ն

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի N 730-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2008 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության համայնքի բյուջեի օրինակելի ձևը և նշված ձևի առանձին հատվածների լրացման մասին ցուցումները հաստատելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2004 թվականի մարտի 5-ի N 194-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 730-Ն հրամանի N 1 հավելվածի 1-ին հատվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ֆինանսների նախարարի
2019 թվականի Դեկտեմբերի 26-ի N 282-Ա հրամանի

«ՀԱՏՎԱԾ 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝				
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1140 + տող 1150) այդ թվում՝	7100			X
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112)	7131			X
	այդ թվում՝				
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար				X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար				X
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136			X
	այդ թվում՝				
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար				X
1130	1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310 + տող 11311 + տող 11312 + տող 11313 + տող 11314 + տող 11315 + տող 11316 + տող 11317 + տող 11318 + տող 11319) այդ թվում՝	7145			X
11301	Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար				X
11302	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքներ կատարելու թույլտվության համար				X
11303	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար				X

11304	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում, խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար				X
11305	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար				X
11306	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար				X
11307	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար				X
11308	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար				X
11309	Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին), ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար				X
11310	Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար				X
11311	Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային կենդանիներ պահելու թույլտվության համար				X
11312	Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների				X

	օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների (բացառությամբ Երևան քաղաքի)				
11313	Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար				X
11314	Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար				X
11315	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար				X
11316	Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար				X
11317	Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար				X
11318	Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար				X
11319	Այլ տեղական տուրքեր				X
1140	1.4 Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1141 + տող 1142) այդ թվում՝	7146			X
1141	Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար				X
1142	Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ				X

	տալու համար				
1150	1.5 Այլ հարկային եկամուտներ (տող 1151 + տող 1155) այդ թվում՝	7161			X
1151	Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ (տող 1152 + տող 1153 + տող 1154) որից՝				X
1152	Եկամտային հարկ				X
1153	Շահութահարկ				X
1154	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ				X
1155	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ				X
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	7300			
	(տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) այդ թվում ՝				
1210	2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝	7311			X
1211	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով				X
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝	7312		X	
1221	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով			X	
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝	7321			X
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով				X
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական	7322		X	

	դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից այդ թվում՝				
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով			X	
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1252 + տող 1255 + տող 1256) որից՝	7331			X
1251	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ				X
1252	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ (տող 1253 + տող 1254) այդ թվում՝				X
1253	Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ				X
1254	Այլ դոտացիաներ				X
1255	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)				X
1256	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ				X
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + տող 1262) այդ թվում՝	7332		X	
1261	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)			X	
1262	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ			X	
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390) այդ թվում՝	7400			
1310	3.1 Տոկոսներ այդ թվում՝	7411		X	
1311	Օրենքով նախատեսված դեպքերում բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ			X	

	միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարներ				
1320	3.2 Շահաբաժիններ այդ թվում՝	7412			X
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասհանումներ (շահաբաժիններ)				X
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334) այդ թվում՝	7415			X
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ				X
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ				X
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ				X
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր				X
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342 + տող 1343) այդ թվում՝	7421			X
1341	Համայնքի սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ տիրազուրկ, համայնքին որպես սեփականություն անցած ապրանքների (բացառությամբ հիմնական միջոց, ոչ նյութական կամ բարձրարժեք ակտիվ հանդիսացող, ինչպես նաև համայնքի պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների) վաճառքից մուտքեր				X
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ				X
1343	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ				X
1350	3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352 + տող 1353) այդ թվում՝	7422			X
1351	Տեղական վճարներ (տող 13501 + տող 13502 + տող 13503 + տող 13504 + տող 13505 + տող 13506 + տող 13507 +				X

	տող 13508 + տող 13509 + տող 13510+ տող 13511 + տող 13512 + տող 13513 + տող 13514 + տող 13515 + տող 13516 + տող 13517 + տող 13518 + տող 13519+ տող 13520) այդ թվում՝				
13501	Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար				X
13502	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար				X
13503	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար				X
13504	Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար				X
13505	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար				X
13506	Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար				X
13507	Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար				X
13508	Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար				X
13509	Կենտրոնացված ջեռուցման համար				X
13510	Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող				X

	կազմակերպությունների սպասարկման տարածքներում				
13511	Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում				X
13512	Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար				X
13513	Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար				X
13514	Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար				X
13515	Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար				X
13516	Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար				X
13517	Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար				X
13518	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար				X
13519	Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց				X
13520	Այլ տեղական վճարներ				X
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ				X

	կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ				
1353	Համայնքի բյուջե մուտքագրվող այլ վարչական գանձումներ				X
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից (տող 1361 + տող 1362) այդ թվում՝	7431			X
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ				X
1362	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից				X
1370	3.7Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված ընթացիկ տրանսֆերտներ (տող 1371 + տող 1372) այդ թվում՝	7441			X
1371	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից				X
1372	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից				X
1380	3.8 Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված կապիտալ տրանսֆերտներ (տող 1381 + տող 1382) այդ թվում՝	7442		X	
1381	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ			X	

	ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից				
1382	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի իրականացման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից			X	
1390	3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392 + տող 1393) այդ թվում՝	7452			
1391	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր			X	
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր			X	
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ				

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ, ՀՈՂԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՌԱՆՁԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	ապառքը տարեսկզբի դրությամբ	ապառքը տարեվերջի դրությամբ	տվյալ տարվա հաշվարկային գումարը
		1	2	3
1	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար			
2	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողերի համար			
3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար			
4	Հողերի վարձակալության վարձավճարներ			x
5	Այլ գույքի վարձակալության վարձավճարներ			x

»: